Արձանագրություն N 3

ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-26/3 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
Անցակետային հսկողության սարքերի գնման

ք. Երևան

5 հունիս 2026թ
ժամը 11:00

Մասնակցում էին՝
անդամներ՝ Մանուկ Աղաբեկյան
Հովհաննես Մխիթարյան
Սմբատ Այդինյան
Անահիտ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

1. ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նախագահի բացակության մասին

Ընդունել ի գիտություն, որ նախագահ Գևորգ Հարությունյանը գտնվում է գործուղման մեջ, նիստ նախագահեց հանձնաժողովի անդամ Մանուկ Աղաբեկյանը

2.Ընթացակարգի հայտի գնահատման մասին

(Մ. Աղաբեկյան)

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց.

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ բացառությամբ՝

1. «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթերի:

2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1), որտեղ՝

1) Տարբերակ 1-ի պարագայում

- Մասնակցի կողմից ներկայացված առաջարկում բացակայում են սարքերի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև նշվել են սարքերի քանակներ, որոնք չեն համապատասխանում հրավերի պայմաններին:

2) Տարբերակ 2-ի պարագայում

- Առաջարկվող սարքավորումները տարբեր արտադրողների արտադրանք են, մինչդեռ հրավերով պահանջվել է ապահովել նույն արտադրողի մուտքի վերահսկման և բիոմետրիկ սարքավորումների միջև ուղիղ ինտեգրում, ինչպես նաև կենտրոնացված կառավարում մեկ միասնական ծրագրային միջավայրից՝ առանց լրացուցիչ controller-ների կիրառման:
- Բացի այդ, ներկայացված տեխնիկական բնութագրերի համաձայն արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- սարքավորման չափսերը գերազանցում են թույլատրելի առավելագույն չափերը,
- սարքավորման քաշը գերազանցում է սահմանված առավելագույն ցուցանիշը,
- աշխատանքային խոնավության և ջերմաստիճանի միջակայքերը չեն համապատասխանում պահանջվող ցուցանիշներին,
- մի շարք պարտադիր ինտերֆեյսների, հիշողության ծավալների և այլ տեխնիկական պարամետրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չի ներկայացվել:

3) Ներկայացված փաստաթղթերում բացակայում են ծրագրային ապահովման մասով առաջարկվող լուծման անվանումը, տարբերակը, ֆունկցիոնալ հնարավորությունները, արտոնագրման (լիցենզավորման) պայմանները, ինչպես նաև տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին համապատասխանությունը հիմնավորող տեղեկատվությունը:

Հանձնաժողովը որոշեց.

2.3 Հիմք ընդունելով ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և մասնակցին՝ «ՏՐԻԳԵՌ» ՍՊԸ-ին, առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ արձանագրված անհամապատասխանությունները:

Ներկայացնել՝

1. «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթերը,
2. Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) շտկված տարբերակը՝ հրավերի պայմաններին համապատասխան:

2.4 Շտկված փաստաթղթերը ուղարկել l.avetisyan@polytechnic.am էլեկտրոնային հասցեով:

2.5 Նիստը վերսկսել շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին (ք. Երևան, Տերյան 105, 3211 սենյակ հասցեում):

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահին փոխարինող — Մանուկ Աղաբեկյան

Անդամներ — Հովհաննես Մխիթարյան

Սմբատ Այդինյան

Անահիտ Կարապետյան

Քարտուղար — Լուսինե Ավետիսյան